10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Մշակույթի նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամիսիկ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

11/4

0078 Երևան, Հայաբլան 41 "", հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

15.08.12թ.

N: 02/4966-12

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 10-ի
15/15.1/11338-12 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից
իրականացվող «Երևան քաղաքի Պյոտր Զայկովսկու անվան երաժշտական
միջնակարգ մասնագիտական դպրոցի կահավորման 3-րդ փուլ» ծրագրի վերաբերյալ
առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

15.08.12թ.

N: 035/21083-12

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227



11/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ

N 01/3.1/3312-12 "17" օգոստոս 2012թ.

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2012 թ. օգոստոսի 10-ի N 15/15.1/11338-12 գրության՝
հայտնում ենք, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Երևան քաղաքի Պյոտր Զայկովսկու անվան երաժշտական
միջնակարգ մասնագիտական դպրոցի կահավորման 3-րդ փուլ» ծրագրի մասին»
որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Նախարարի տեղակալ՝

Ա. ՍԱՄՈՒԻԼՅԱՆ

17.08.12թ.

N: 021/21381-12

Կատ.՝ Գ. Գույումջյան
Հեռ.՝ 56-40-50



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 060 54 43 02

15.08.12թ.
№ 22/3-4/8631-12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.08.2012թ. թիվ 15/15.1/11338-12 գրությանը կից ներկայացված
«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան
քաղաքի Պյոտր Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական
դպրոցի կահավորման 3-րդ փուլ» ծրագրի մասին» որոշման նախագիծը
բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. Միրումյան

Անողակի հարկերի բաժին, հեռ. 060 544652

15.08.12թ.

№ 044/21129-12

Ն Ա Ն Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— 2012 թվականի N Մ- —Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐ-
ԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵ-
ՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԵՎ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԲԵՐԳԵՆԻ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԵՆՍԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ.
ՄԱՆԵՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱ-
ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2012 թվականի օգոստոսի 6-ի N 3/3.8-1/10263-12, Հայաստանի
Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 2-ի
N 02/4711-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
2012 թվականի հուլիսի 30-ի N 03/07-1/8260-12 և Հայաստանի Հանրապետության
կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի
31-ի N ՎՄ/3-4/8111-12 եզրակացությունները, որոշում է:

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտու-
թյան նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության (ՊՈԱԿ) կողմից 2012-2014 թվականներին իրականացվող՝ 666000
նորվեգական կրոն ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության կրթության և
գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի և Նորվեգիայի
Բերգենի համալսարանի կենսաբանության ֆակուլտետի, մանրէների էկոլոգիայի բնագա-
վառում համագործակցություն» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում
մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի
պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-
գործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի

11/5

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ կրթության և գիտության նախարարության
"Երևանի Պետական համալսարան" ՊՈԱԿ
Կրթության և գիտության նախարարության
համագործակցության



2012թ.

ՀՀ կրթության և գիտության նախարարության "Երևանի Պետական համալսարան" ՊՈԱԿ
և Նորվեգիայի Բերգենի համալսարանի կենսաբանության ֆակուլտետի
համագործակցության
Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Ծրագրի նպատակը	Ծրագրի շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարության "Երևանի Պետական համալսարան" ՊՈԱԿ (ԵՊՀ) կենսաբանության ֆակուլտետի Սամբարյանի Բերգենի համալսարանի կենսաբանության ամբիոնը, Նորվեգիայի Բերգենի համալսարանի կենսաբանության ֆակուլտետի իր կոլեգաների օգնությամբ, ստեղծելու է մանրէների գիտակերպական բազա՝ էկոլոգիայի և էկոլոգիական կենսաբանության բնագավառում, ամբիոնի լաբորատորիան հագեցնելու է նոր սարքերով, որոնք հնարավորություն կտա ստեղծել մանրէների հետազոտման ժամանակակից մոլեկուլային մեթոդների մեթոդները համար, մշակելու է "Մանրէների էկոլոգիա" ուսումնական առարկայի ծրագիրը: Նախատեսվում են մաս. ԵՊՀ մասնագետների, մագիստրոսների և ասպիրանտների գործուղումներ Բերգենի ՀՀ կրթության և գիտության նախարարության և Նորվեգիայի Բերգենի համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կողմից:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային և մաքսային արտոնություններից:
3. Բարեգործը	Բարձրագույն կրթության բնագավառում միջազգային համագործակցության Նորվեգիական կենտրոն ("Համագործակցություն Եվրասիա 2010-2014" ծրագիր, որամաշնորհ # CPEA-2011/10081) Norwegian Centre for International Cooperation in Education (SIU) P.O. box 1093, N-5809 Bergen, Norway Tel: +47 55 30 38 00

11/5

		2 Fax: +47 55 30 38 01 E-mail: siu@siu.no
4.	Ծրագիրը կատարողը	ՀՀ կրթության և գիտության նախարարության "Երևանի Պետական Համալսարան" ՊՈԱԿ, 0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՀՀՀ 01506928
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՀ կրթության և գիտության նախարարության "Երևանի Պետական Համալսարան" ՊՈԱԿ, Կենսաբանության ֆակուլտետի Սանիտաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոն, բնագավառը կրթություն և գիտություն
6.	Ծրագրի բյուջեն	666000 NOK - նորվեգական կոն (կամ համարժեք դրամ, ըստ ՀՀ ԿԲ-ի տվյալ օրվա ԱՄՆ դոլար / դրամ փոխարժեքի, քանի որ նորվեգական կոնն գումարը փոխանցելու է ԱՄՆ դոլարներով): Այդ թվում՝ 2012 թ. – 301000 NOK (276000 + 25000 – որոշ չէր փոխանցվել 2011 թ.-ին ծրագրի ֆինանսավորման ուշացման պատճառով) 2013 թ. – 230000 NOK 2014 թ. – 135000 NOK
7.	Բարեգործություն ստացող	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.09.2012թ.-ից մինչև 30.12.2014թ. 2012 թ.-ին 301000 NOK, այդ թվում՝ 1. Գիտական սարքերի ներմուծում արտերկրներից, 120000 NOK-ին համարժեք դրամ, 2. Գրասենյակային պարագաների և համակարգչային ծրագրերի գնում ՀՀ-ում, 28000 NOK-ին համարժեք դրամ, 3. Գրքերի և ամսագրերի ներմուծում արտերկրներից, ծախսեր ՀՀ-ում՝ ծրագրի շրջանակներում հողվածների, ուսումնա մեթոդական ձեռնարկների հրատարակման և մագիստրոսական ու բենժամական բեզերի պատրաստման համար, 22000 NOK-ին համարժեք դրամ, 4. Գործուղման ծախսեր, 44000 NOK-ին համարժեք դրամ, 5. Այլ ծախսեր, 52000 NOK-ին համարժեք դրամ (20000 NOK-ը փոխադրվել է 2011թ.-ից), 6. Նախագծի ղեկավարման ծախսեր, 30000 NOK-ին համարժեք դրամ (5000 NOK-ը փոխադրվել է 2011թ.-ից): Սա նախագծի հայկական կողմի համակարգողին, իր հիմնական աշխատանքին զուգահեռ, նախագծի գիտական համակարգման և ղեկավարելու համար հատկացվող տարեկան գումար է, 7. Վերադիր ծախսեր, 5000 NOK-ին համարժեք դրամ
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	

		3 2013թ.-ին 230000 NOK, առիթ թվում՝ 1. Գրքերի և ամսագրերի ներմուծում արտերկրներից, ծախսեր ՀՀ-ում՝ ծրագրի շրջանակներում հողվածների, ուսումնա մեթոդական ձեռնարկների հրատարակման և մագիստրոսական և բենժամական բեզերի պատրաստման համար, 22000 NOK-ին համարժեք դրամ, 2. Միջազգային կոնֆերանսների, սեմինարների և աշխատանքային համոլիումների կազմակերպում, ինտերնետային ծախսեր (networking), 120000 NOK-ին համարժեք դրամ, 3. Գործուղման ծախսեր, 28000 NOK-ին համարժեք դրամ, 4. Այլ ծախսեր, 30000 NOK-ին համարժեք դրամ, 5. Նախագծի ղեկավարման ծախսեր, 25000 NOK-ին համարժեք դրամ, 6. Վերադիր ծախսեր, 5000 NOK-ին համարժեք դրամ 2014թ.-ին 135000 NOK, այդ թվում՝ 1. Գրքերի և ամսագրերի ներմուծում արտերկրներից, ծախսեր ՀՀ-ում՝ ծրագրի շրջանակներում հողվածների, ուսումնա մեթոդական ձեռնարկների հրատարակման և մագիստրոսական և բենժամական բեզերի պատրաստման համար, 22000 NOK-ին համարժեք դրամ, 2. Միջազգային կոնֆերանսների, սեմինարների և աշխատանքային համոլիումների կազմակերպում, ինտերնետային ծախսեր (networking), 30000 NOK-ին համարժեք դրամ, 3. Գործուղման ծախսեր, 28000 NOK-ին համարժեք դրամ, 4. Այլ ծախսեր, 30000 NOK-ին համարժեք դրամ, 5. Նախագծի ղեկավարման ծախսեր, 20000 NOK-ին համարժեք դրամ, 6. Վերադիր ծախսեր, 5000 NOK-ին համարժեք դրամ 2012 թ.-ին՝ 1. Գիտական սարքերի ներմուծում արտերկրներից, 120000 NOK-ին համարժեք դրամ: Այդ թվում՝ - Ղեկավարող ժեկտեկտաֆորեզային ապարատ "DCode System for DGGE, Bio Rad", 1 հատ, այսօրվա դրությամբ՝ 66625 NOK + ծանապարհածախս և մաքսային ծանկերպումները,
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	

- Պոլիմերազային շրջայական ռեակցիայի սարք "T100 Thermal Cycler, Bio Rad", 1 հատ, այսօրվա դրությամբ՝ 41840 NOK + ճանապարհածախսն և մաքսային,
 - Միկրոլենտոդոմախտակ "Microcentrifuge 5424/5424R, Centrifuge 5424 R, Knob, 24x1.5/2 mL AT rotor, 120 V, 50/60Hz", 1 հատ, այսօրվա դրությամբ՝ 6695 ԱՄՆ դոլար + ճանապարհածախսն և մաքսային ձևակերպումներն,
 - Քիմիական ռեակտիվներ, սննդամիջավայրեր և լաբորատոր պարագաներ:

2. Գրասենյակային պարագաների և համակարգչային ծրագրերի գնում, 28000 NOK-ին համարժեք դրամ,
3. Գրքերի և ամսագրերի ներմուծում արտերկրներից, ծախսեր 33-ում՝ ծրագրի շրջանակներում հողվածների, ուսումնա մեթոդական ձեռնարկների հրատարակման և մագիստրոսական և քելանձուական քեզերի պատրաստման համար, 22000 NOK-ին համարժեք դրամ,
4. Գործուղման ծախսեր, 44000 NOK-ին համարժեք դրամ: Նորվեգիա են գործուղվելու՝ ծրագրի հայկական կողմի համակարգողը և ծրագրի այլ մասնակիցներ, ինչպես նաև ծրագրում ընդգրկված մագիստրոսներ և ասպիրանտներ:
5. Այլ ծախսեր, 52000 NOK-ին համարժեք դրամ (20000 NOK-ը փոխադրվել է 2011թ.-ից): Սրանք նախատեսված են ծրագրի կատարման ընթացքում չնախատեսված սարքեր և տեխնիկա գնելու, վերանորոգելու, քիմիական նյութեր և ռեակտիվներ, լաբորատոր այլ պարագաներ գնելու, ինչպես նաև, ամիրաժեշտության դեպքում, լրացուցիչ գործուղումների և համոդիստների կազմակերպման և այլնի համար:
6. Նախագծի ղեկավարման ծախսեր, 30000 NOK-ին համարժեք դրամ (5000 NOK-ը փոխադրվել է 2011թ.-ից): Սա նախագծի հայկական կողմի համակարգողին, իր հիմնական աշխատանքին զուգահեռ, նախագծի գիտական համակարգման և ղեկավարելու համար հատկացվող տարեկան գումար է:
7. Վերադիր ծախսեր, 5000 NOK-ին համարժեք դրամ

2013թ.-ին

1. Գրքերի և ամսագրերի ներմուծում արտերկրներից, ծախսեր 33-ում՝ ծրագրի շրջանակներում հողվածների, ուսումնա մեթոդական ձեռնարկների հրատարակման և մագիստրոսական և քելանձուական քեզերի պատրաստման համար, 22000 NOK-ին համարժեք դրամ,

11/5

2. Միջազգային կոնֆերանսների, սեմինարների և աշխատանքային հանդիպումների կազմակերպում, ինտերնետային ծախսեր (networking), 120000 NOK-ին համարժեք դրամ: Տվյալ տարվա սեպտեմբերին միջազգային գիտաժողովի կազմակերպում (ինտերնետում կայքի ստեղծում, ինֆորմացիոն քեթիկները տարում, գովազդային պատաստմների և այցեքարտերի պատրաստում, բոթապանակների և գրենական պիտույքների գնում ու բաժանում, Ֆուրշետների, բամբկետի կազմակերպում, մասնակիցներին օղակայանում դիմավորելու և ծանապարհելու համար մեքենաների պատվիրում, մշակութային ծրագրերի կազմակերպում և այլն):
3. Գործուղման ծախսեր, 28000 NOK-ին համարժեք դրամ: Նորվեգիա են գործուղվելու՝ ծրագրի հայկական կողմի համակարգողը և ծրագրի այլ մասնակիցներ, ինչպես նաև ծրագրում ընդգրկված մագիստրոսներ և ասպիրանտներ:
4. Այլ ծախսեր, 30000 NOK-ին համարժեք դրամ: Սրանք նախատեսված են ծրագրի կատարման ընթացքում չնախատեսված սարքեր և տեխնիկա գնելու, վերանորոգելու, քիմիական նյութեր և ռեակտիվներ, լաբորատոր այլ պարագաներ գնելու, ինչպես նաև, ամիրաժեշտության դեպքում, լրացուցիչ գործուղումների և հանդիպումների կազմակերպման և այլնի համար:
5. Նախագծի ղեկավարման ծախսեր, 25000 NOK-ին համարժեք դրամ: Սա նախագծի հայկական կողմի համակարգողին, իր հիմնական աշխատանքին զուգահեռ, նախագծի գիտական համակարգման և ղեկավարելու համար հատկացվող տարեկան գումարն է,
6. Վերադիր ծախսեր, 5000 NOK-ին համարժեք դրամ


2014թ.-ին

1. Գրքերի և ամսագրերի ներմուծում արտերկրներից, ծախսեր 33-ում՝ ծրագրի շրջանակներում հողվածների, ուսումնա մեթոդական ձեռնարկների հրատարակման և մագիստրոսական և քելանձուական քեզերի պատրաստման համար, 22000 NOK-ին համարժեք դրամ,
2. Միջազգային կոնֆերանսների, սեմինարների և աշխատանքային հանդիպումների կազմակերպում, ինտերնետային ծախսեր (networking), 30000 NOK-ին համարժեք դրամ: Տվյալ տարում ամիոփիչ հանդիպումներ, սեմինարի և կլոր սեղանների կազմակերպում (ինֆորմացիոն քեթիկները տարում, գովազդային ծրագրերի կազմակերպում և այլն):

11/5

11/5

11/5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

06.08.12p №3/3.8-1/10263-1

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լույս մեր 01.08.2012թ N 3/3.8-1/10053-12 գրության և հիմք ընդունելով ՀՀ
կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի
02.08.2012թ. թիվ 02/498 գրությամբ ներկայացված պարզաբանումը՝ կապված Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական
համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից 2012-2014 թվականներին իրականացվող՝ «Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական
համալսարան» ՊՈԱԿ-ի և Նորվեգիայի Բերգսի համալսարանի կենսաբանության
ֆակուլտետի, մանրէների էկոլոգիայի բնագավառում համագործակցություն» ծրագրի
լրամշակված տարբերակի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ա. Ե. Ե.

Ատոմ Զանցուղայան

№034/20397-12
06.08.12p

6

	տալում, այցելարտերի պատրաստում, բոթապամակների և զրենական պիտույքների գնում ու բաժանում, ֆուրշետների, բանկետի կազմակերպում, մասնակիցներին օդակայանում ընկալելու և ճանապարհելու համար մեքենաների պատվիրում, մշակույթային ծրագրերի կազմակերպում և այլն):
	3. Գործուղման ծախսեր, 28000 NOK-ին համարժեք դրամ: Նորվեգիա են գործուղվելու՝ ծրագրի հայկական կողմի համակարգողը և ծրագրի այլ մասնակիցներ, ինչպես նաև ծրագրում ընդգրկված մագիստրոսներ և ասպիրանտներ:
	4. Սյլ ծախսեր, 30000 NOK-ին համարժեք դրամ: Մասնք մախատնակած են ծրագրի կատարման ընթացքում չնախատեսված սարքեր և տեխնիկա գներ, վերանորոգելու, քիմիական նյութեր և ռեակտիվներ, լաբորատոր այլ պարագաներ գներ, ինչպես նաև, ամրաժեշտության դեպքում, լրացուցիչ գործուղումների և հանդիպումների կազմակերպման և այլնի համար:
	5. Նախագծի ղեկավարման ծախսեր, 20000 NOK-ին համարժեք դրամ: Սա նախագծի հայկական կողմի համակարգողին, իր հիմնական աշխատանքին զուգահեռ, նախագծի գիտական համակարգման և ղեկավարելու համար հատկացվող տարեկան գումար է:
	6. Վերադիր ծախսեր, 5000 NOK-ին համարժեք դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ
13.	Ծրագրի արդյունավետության մկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը

Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն

ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ Պետեկամտնների կոմիտե,
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողով, տեղական և արտասահմանյան տպարաններ և
իրատարակչություններ, գրքավաճառներ, գրասենյակային պարագաներ
կաճառող, տուրիստական և այլ սերվիսներ մատուցող ֆիրմաներ:
Իրականացվում է ԵՊՀ բնագիտական ֆակուլտետների ղեկավարների և
գիտական ջաղ-ն, միջազգ-ին համագործակցության գծով պրոռեկտոր՝ Գ.
Վարդյանի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակը մեկ հաշվետվություն է
ներկայացվելու բարձրագույն կրթության բնագավառում միջազգային
համագործակցության Նորվեգական կենտրոնին և ՀՀ կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0078 Երևան, Հայաստան 41", հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահի
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 27-ի
15/15.4/10570-12 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի և Նորվեգիայի Բերգենի համալսարանի կենսաբանության ֆակուլտետների, մանրէների էկոլոգիայի բնագավառում համագործակցություն» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227

N035/20172-12
02-08-12թ.

11/5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ**



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
DEPUTY MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел.: 58 03 02, ֆաքս/факс/ fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/8260 30.07-2012

**ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահի պարոն Ս.Տեր-Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի հուլիսի 27-ի №15/15.4/10570-12 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից 2012-2014 թվականներին իրականացվող «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի և Նորվեգիայի Բերգենի համալսարանի կենսաբանության ֆակուլտետի, մանրէների էկոլոգիայի բնագավառում համագործակցություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ս.ՄԱՐՏԶՅԱՆ

Կար. Ն.Սահակյան
հեռ. 524777

N031/19830-12
30.07-12թ.

11/5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ. Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 43 02

ՆՁ/Մ/3-4/8111-12
31.07.12թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 27.07.2012թ. թիվ 15/15.4/10570-12 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող
«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի և Նորվեգիայի Բերգսենի
համալսարանի կենսաբանության ֆակուլտետների. մանրէների էկոլոգիայի
բնագավառում համագործակցություն» ծրագրի մասին որոշման նախագծի
վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Ն044/19854-12
31.07.12թ.

11/6

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

օգոստոսի 2012 թվականի N Մ-
քաղ. Երևան - Ա

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՋԵ ԵՎ
ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ» ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՋԱՊԱՏՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսնե-
րի նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-12, Հայաստանի Հանրապե-
տության արդարադատության նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N 02/-12,
Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N,
Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների
կոմիտեի 2012 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/-12 և Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետարանի 2012 թվականի հուլիսի -ի N եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝
385.875.060 դրամ արժողությամբ «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի
տարածքի բարեկարգման և կանաչապատման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝
ստորև նշված եռակողմ պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն
կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար
ունեն զգալի նշանակություն՝

1) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Մեծարենց 88ա, ՀՎՀՀ՝ 01831375) 2012
թվականի մայիսի 16-ին կնքված եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով
նախատեսվում է «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից
տարածքում կատարել խոտածածկի և ըստ նախագծի պատվիրատուի կողմից
տրամադրված բույսերով լանդշաֆտի իրականացման աշխատանքներ՝ 32.137.900 դրամի
չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Մեծարենց 88ա, ՀՎՀՀ՝ 01831375) 2012
թվականի մայիսի 16-ին կնքված եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով
նախատեսվում է «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքի

11/6

կանաչապատման համար կատարել անհրաժեշտ ոռոգման համակարգի անցկացման աշխատանքներ՝ 18.000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Վ. Համբարձումյան փող. 2, 10, բն. 22, ՀՎՀՀ՝ 00250089) 2012 թվականի մայիսի 29-ին կնքված եռակողմ N 09Ը/012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանին հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 335737160 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին :



«Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի տարածքի բարեկարգման և կանաչապատման

Ծ Ր Ա Գ Ի Ր

11/6

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է բարեկարգել և կանաչապատել «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ԳՎՀՀ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք, բնագավառը՝ մշակութային
6	Ծրագրի բյուջեն	385 875 060 ՀՀ դրամ:
7	Բարեգործությունն ստացողը	Մայր Աթոռի միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	10 հուլիսի, 2012թ. - 31 դեկտեմբերի, 2012թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքի բարեկարգում և կանաչապատում 385 875 060 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքներն իրականացվում են՝ 1. Բարեկարգման աշխատանքներ (հարակից տարածքի հարթեցում, անցուղիների պատրաստում, ճանապարհների ասֆալտապատում), որն իրականացվում է «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Վ. Համբարձումյան 10 շենք, 22 բն. ԳՎՀՀ 00250089, պայմանագիր թիվ 09Ը/012, կնքված՝ 29.05.2012թ., 335 737 160 ՀՀ դրամով): 2. Խոտածածկի և բույսերի տնկման աշխատանքներ, որն իրականացվում է «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Մ. Մեծարենց 88ա, ԳՎՀՀ 01831375), պայմանագիր կնքված 16.05.2012թ., 32 137 900 ՀՀ դրամով, 3. Ոռոգման համակարգի անցկացման աշխատանքներ, որն իրականացվում է «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Մ. Մեծարենց 88ա, ԳՎՀՀ 01831375), պայմանագիր կնքված 16.05.2012թ., 18 000 000 ՀՀ դրամով,
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքը բարեկարգել և կանաչապատել՝ 385 875 060 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքներն իրականացվում են՝ 1. «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Վ. Համբարձումյան 10 շենք, 22 բն. ԳՎՀՀ 00250089, պայմանագիր թիվ 09Ը/012, կնքված՝ 29.05.2012թ., 335 737 160 ՀՀ դրամով, բարեկարգման աշխատանքներ: 2. «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Մ. Մեծարենց 88ա, ԳՎՀՀ 01831375), պայմանագիր կնքված 16.05.2012թ., 32 137 900 ՀՀ դրամով, խոտածածկի և բույսերի տնկման աշխատանքներ: 3. «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Մ. Մեծարենց 88ա, ԳՎՀՀ 01831375), պայմանագիր կնքված 16.05.2012թ., 18 000 000 ՀՀ դրամով, ոռոգման համակարգի անցկացում:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը	Նախատեսվում է համագործակցություն Արմավիրի մարզպետարանի և

	պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Էջմիածնի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

11/6



11/6
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

24.07.12թ. № 3/3.8-1/9655-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 21.07.12թ. N 15/15.8/10229-12 գրության՝ կապված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող <<Վաչե և Թամար Մանուկյաններ>> մատենադարանի տարածքի բարեկարգման և կանաչապատման>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, հետևյալը.

1. Ծրագրի 9-րդ կետում իրականացվող միջոցառումները ներկայացված չեն ըստ ֆինանսական ծավալների և կոնկրետ կատարվելիք աշխատանքների,
2. որոշման նախագծի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված պայմանագրերի ամսաթվերը չեն համապատասխանում կցված պայմանագրերի ամսաթվերին:

Հարգանքով

Արմեն Շահնազարյան

24.07.12թ.
№ 034/19233-12



11/6

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0078 Երևան, Հայաստան 41*, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

26. 07. 12 թ.

№ 02/4524-12

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 21-ի
15/15.8/10229-12 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի տարածքի բարեկարգման և կանաչապատման» ծրագրի 9-րդ կետում պետք է նշվի միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը, իսկ 10-րդ կետում՝ ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը, մինչդեռ 9-րդ և 10-րդ կետերը նույն բովանդակությունն ունեն, մասնավորապես՝ 9-րդ կետում նշված չեն միջոցառումների ժամկետները, իսկ 10-րդ կետում նշված է միայն նախատեսվող գինը, բացի այդ, ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների նկարագրի և ծավալների փոխարեն նշված են միայն այն կազմակերպությունների անվանումները, որոնք պետք է իրականացնեն բարեկարգման, տնկման և ոռոգման համակարգի անցկացման աշխատանքները:

Այդ առումով առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227

26. 07. 12 թ.

№ 035/19494-12



11/6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ

N 01/31/3000-12 "25" հուլիս 2012 թ.

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն Ս. Տեր-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2012 թ. Հուլիսի 21-ի N 15/15.8/10229-12 գրության՝ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի տարածքի բարեկարգման և կանաչապատման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ չունենք և առաջարկում ենք այն որակել բարեգործական:

Հարգանքով՝

Հ. ՊՈՐՈՍՅԱՆ

Կատ.՝ Գ. Գույումջյան
Հեռ.՝ 56-40-50

25. 07. 12 թ.

№ 021/19276-12

0010, Երևան, Հանրապետության իրավարար, Կառավարական տուն 3 հեռ./Տեղ./Tel.: 52 93 49, ֆաքս/ֆաքս/fax (374 10) 52 39
22,0010, Ереван, Площадь Республики, Дом правительства 3, Government Building 3, Republic Square, Yerevan 0010,
Էլ. փոստ/ Эл. почта/ E-mail: info@mincult.am, www.mincult.am



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7

Հեռ. 50 20 20, 060 54 46 05

24. 07. 12 թ.

№ ՆՆԿ/3-4/7884-12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 21.07.2012թ. թիվ 15/15.8/10229-12 գրությանը կից ներկայացված «Մայր
Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վաչե և Թամար Մանուկյաններ»
մատենադարանի տարածքի բարեկարգման և կանաչապատման ծրագրի մասին»
որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ
չկան:

Ա. Աղվերդյան

Անողջակի հարկերի բաժին, հեռ. 060 544652

24. 07. 12 թ.

№ 044/19242-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

МАРЗПЕТ АРМАВИРА

<< 25 >> հուլիս 2012թ.

№ 01/13/2472-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 21.07.2012թ. N 15/15.8/10229-12 գրության տեղեկացվում է, որ
<<Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վաչե և Թամար
Մանուկյաններ» մատենադարանի տարածքի բարեկարգման և կանաչապատման ծրագրի մասին»
որոշման նախագիծը որոշման նախագիծը քննարկվել է ՀՀ Արմավիրի մարզպետարանում և
արժանացել հավանության:

Ձեռք առարկում այն որպես բարեգործական որակելու:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատ՝ Փ. Կարապետյան
Ծ. Գրիգորյան
Լ. Մուշեղյան

25. 07. 12թ.

№ 112/19354-12

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կողմից իրականացվող «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի տարածքի բարեկարգման և կանաչապատման» ծրագրի մասին որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բավանդականությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ	
1. ծրագրի 9-րդ կետում իրականացվող միջոցառումները ներկայացված չեն ըստ ֆինանսական ծավալների և կոնկրետ կատարվելիք աշխատանքների, 2. որոշման նախագծի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված պայմանագրերի ամսաթվերը չեն համապատասխանում կցված պայմանագրերի ամսաթվերին:	Դիտողությունը հաշվի է առնվել, նախագիծը և ծրագիրը լրամշակվել են:
ՀՀ արդարադատության նախարարությունի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ	
-ծրագրի 9-րդ կետում պետք է նշվի միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը, իսկ 10-րդ կետում՝ ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը, մինչև 9-րդ և 10-րդ կետերը նույն բովանդակություն ունեն, մասնավորապես՝ 9-րդ կետում նշված չեն միջոցառումների ժամկետները, իսկ 10-րդ կետում նշված է միայն նախատեսվող գինը, բացի այդ, ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների նկարագրի և ծավալների փոխարեն նշված են միայն այն կազմակերպությունների անվանումները, որոնք պետք է իրականացնեն բարեկարգման, տնկման և ոռոգման համակարգի անցկացման աշխատանքները:	Դիտողությունը հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել և փոխվել է:

11/6



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԻԲ ԵՎ ԵՐԵՅԻ

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԻԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Հեռ. /+374 10/ 517-141, /+374 10/ 517-142 Ֆաքս /+374 10/ 517-3011Էլ. փոստ varchatntesakanl@etchmiadzin.am

№ 358

22 օգոստոսի, 2012թ.

ՄԵԾԱՐԳՈՒ

ՏԻԱՐ ՄԻՄՈՆ ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

Մեծարգո Պրն. Տեր-Սիմոնյան.

Ի պատասխան Ձեր 25.07.2012թ. թիվ 15/15.8/10401-12 գրության ներկայացնում ենք «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի տարածքի բարեկարգման և կանաչապատման ծրագրի» լրամշակված տարբերակը:


Առ Աստված աղոթքով մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, գործող հաջողություններ և ամենայն բարիք:

Օրինությամբ՝



ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Առդիր 2 թերթ:



11/7

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— **օգոստոսի 2012 թվականի N Մ-
քաղ. երևան**

- Ա

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՎԵՀԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N 02/-12, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2012 թվականի հուլիսի -ի N, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/-12 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2012 թվականի հուլիսի -ի N եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 1.956.400.000 դրամ արժողությամբ «Վեհարանի շենքի վերակառուցման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Դավա շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07203422) 2012 թվականի ապրիլի 13-ին կնքված եռակողմ N 9 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանի շենքի վերակառուցում՝ 1.846.400.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «ՀԱՅԶՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ-ի «ԿԵՆՏՐՈՆ- ԱՐԵՎՄՏՅԱՆ» մասնաճյուղի Էջմիածնի տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2008 թվականի հունվարի 1-ին կնքված N 150995043 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հուլիսի 10-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 20.000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

11/7

3) «Հայրուսագալարդ» ՓԲԸ-ի Էջմիածնի ԳԳՄ-ի մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի հունվարի 3-ին կնքված N 10002082749 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հուլիսի 10-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը գազի մատակարարում՝ 90.000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

Վեհարանի շենքի վերակառուցման
 Ծ Ր Ա Գ Ի Ր

11/7

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Վեհարանի շենքի վերակառուցումը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործոր (բարեգործները)	«Տաշիր» ԲԶ, ք. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203481
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք, բնագավառը՝ հոգևոր
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն 1,956,400,000 ՀՀ դրամ է Հիմնարարություն՝ 2012թ. III եռամսյակ- 250.000.000 դրամ, IV եռամսյակ- 200.000.000 դրամ, 2013թ. I եռամսյակ-250.000.000 դրամ, II եռամսյակ- 450.000.000 դրամ, III եռամսյակ-450.000.000 դրամ, IV եռամսյակ- 246.000.000 դրամ: Կազմակերպական ծախսեր՝ 2012թ. III եռամսյակ-15.000.000, IV-15.000.000 2013թ. I եռամսյակ- 20.000.000 դրամ, II եռամսյակ- 20.000.000 դրամ, III եռամսյակ- 20.000.000 դրամ, IV եռամսյակ-20.000.000 դրամ:
7	Բարեգործությունն ստացողը	Մայր Աթոռի միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	10 հուլիսի, 2012թ. – 31 դեկտեմբերի, 2013թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է վերակառուցել Վեհարանի շենքը 1 846 400 000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ, որից 1) Քանդման աշխատանքներ- 58,800,000 դրամ, աշխատանքների ավարտման ժամկետը 12.30.2012թ. 2)Հողային աշխատանքներ- 32,600,000 դրամ, աշխատանքների ավարտման ժամկետը 07.30.2012թ. 3) Համաշինարարական աշխատանքներ-1,755,000,000, աշխատանքների ավարտման ժամկետը 12.30.2013թ. Հիմնարարական աշխատանքներն իրականացվում են «Դավա շին» ՍՊԸ-ի (ՀՀ. ք. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203422) կողմից, պայմանագիր թիվ 9, կնքված 13.04.2012թ.:
10	Չեղք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է վերակառուցել Վեհարանի շենքը 1 846 400 000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Հիմնարարական աշխատանքներն իրականացվում են «Դավա շին» ՍՊԸ-ի (ՀՀ. ք. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203422) կողմից, պայմանագիր թիվ 9, կնքված 13.04.2012թ.:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Գազի ծախս՝ 90 000 000 ՀՀ դրամ, որից 2012թ. – 25 000 000 դրամ, 2013թ. – 65 000 000 դրամ՝ առանց ԱԱՀ, պայմանագիր թիվ 10002082749, կնքված 03.01.2008թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «Հայոռուսգազարտ» ՓԲԸ Էջմիածնի ԳԳՄ-ի միջև: Ջրի ծախս՝ 20 000 000 ՀՀ դրամ, որից 2012թ. – 5 000 000 դրամ, 2013թ. – 15 000 000 դրամ՝ առանց ԱԱՀ, պայմանագիր թիվ 150995043, կնքված 01.01.2008թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «ՀԱՅՋՐՄՈՒԴԿՈՅՈՒԴԻ» ՓԲԸ «Կենտրոն-Արևմտյան» մասնաճյուղի Էջմիածնի տեղամասի միջև: Կազմակերպական ծախսերը կազմում են ծրագրի ընդհանուր բյուջեի 5,95%-ը:
12	Համառոտնախույժում	Նախատեսվում է համառոտնախույժումն իր քառաթաղանթում

	պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ:	Նախարարության, Արմավիրի մարզպետարանի և Վաղարշապատ քաղաքի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

11/7



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

11/7

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

24. 07. 12թ. № 3/3.8-1/9620-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 21.07.12թ. N 15/15.8/10233-12 գրության՝ կապված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող <<Վեհարանի շենքի կառուցում>> ծրագրի մասին << կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, հետևյալը.

1. Ծրագրի 9-րդ կետում իրականացվող միջոցառումները ներկայացված չեն ըստ ֆինանսական ծավալների և կոնկրետ կատարվելիք աշխատանքների,
2. Ծրագրի բյուջեի բացվածքը անհրաժեշտ է ներկայացնել եռամսյակային կտրվացքով,
3. որոշման նախագծի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված պայմանագրերի հանրագումարը գերազանցում է ծրագրի բյուջեն:

Հարգանքով

Արմեն Շահնագարյան

24. 07. 12թ.
№ 034/19145-12



11/7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078 Երևան, Հալաբյան 41^ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

26. 07. 12թ.
№ 02/4525-12

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 21-ի
15/15.8/10233-12 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վեհարանի շենքի վերակառուցում» ծրագրի 9-րդ կետում պետք է նշվի միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը, իսկ 10-րդ կետում՝ ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը, մինչդեռ 9-րդ և 10-րդ կետերը նույն բովանդակությունն ունեն, մասնավորապես՝ 9-րդ կետում նշված չեն միջոցառումների ժամկետները, իսկ 10-րդ կետում նշված է միայն նախատեսվող գինը, բացի այդ, ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների նկարագրի և ծավալների փոխարեն նշված է միայն այն կազմակերպության անվանումը, որը պետք է իրականացնի շինարարական աշխատանքները:

Այդ առումով առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ծրագրի դրույթները:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

26. 07. 12թ.
№ 035/19495-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

11/7

37510, ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
37510, г. Ереван, Республика Армения,
Дом Правительства 3
Government House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 523200
www.mud.am
E-mail: info@mud.am

24.07.12թ. N 03/13.2/3435-12

Ձեր N _____ առ _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Ձեր 2012 թվականի հուլիսի 21-ի
N15/15.8/10233-12 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վեհարանի շենքի վերակառուցման»
ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ
առաջարկություններ չկան:

Հարգանքով

Ա. Աղայան

Ե. Աղայան
52-46-80

24.07.12թ.
№ 027/19206-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ 11/7

0015, Երևան, Մ. Խորենացու 3, 7

Հեռ. 50 20 20, 060 54 46 05

24.07.12թ.
№ ՆԿՆԻ/3-4/7886-12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 21.07.2012թ. թիվ 15/15.8/10233-12 գրությանը կից ներկայացված «Մայր
Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վեհարանի շենքի վերակառուցման»
ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ
հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի 11-րդ կետով ջրի ծախսը նախատեսված է 20 000
000 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանում որոշման նախագծի 2-րդ կետի 2-րդ
ենթակետով նախատեսված 2012 թվականի հուլիսի 10-ից մինչև 2013 թվականի
դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների
մատուցման գումարին: Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկում եմ կատարել
ուղղումներ:

Ա. Աղայան

Անողորակի հարկերի բաժին, հեռ. 060 544652

24.07.12թ.
№ 044/19240-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ

11/7

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

МАРЗПЕТ АРМАВИРА

<< 26 >> հուլիս 2012թ.

N 01/04.2/2485-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 21.07.2012թ 15/15.8/10233-12 գրության՝ տեղեկացվում է, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վեհարանի շենքի վերակառուցման» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Վերը նշված նախագծի վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետարանը առաջարկություններ և առարկություններ չունի:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատ.՝ Կ.Դանիելյան

26.07.12թ.

N 112/19461-12

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Բ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական համակարգման ծրագրերի հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վեհարանի շենքի վերակառուցման» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բավարարվածությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ - ծրագրի 9-րդ կետում իրականացվող միջոցառումները ներկայացված չեն ըստ ֆինանսական ծավալների և կոնկրետ կատարվելիք աշխատանքների, - ծրագրի բյուջեի բացվածքը անհրաժեշտ է ներկայացնել եռամսյակային կտրվածքով, - որոշման նախագծի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված պայմանագրերի հանրագումարը զերոյանցում է ծրագրի բյուջեն:	Դիտողությունը հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է:
ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ - ծրագրի 9-րդ կետում պետք է նշվի միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը, իսկ 10-րդ կետում՝ ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը, մինչև 9-րդ և 10-րդ կետերը նույն բովանդակություն ունեն, մասնավորապես՝ 9-րդ կետում նշված չեն միջոցառումների ժամկետները, իսկ 10-րդ կետում նշված է միայն նախատեսվող գինը, բացի այդ, ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների նկարագրի և ծավալների փոխարեն նշված է միայն այն կազմակերպության անվանումը, որը պետք է իրականացնի շինարարական աշխատանքները:	Դիտողությունը հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է:
ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ - կից ներկայացված ծրագրի 11-րդ կետով ջրի ծախսը նախատեսված է 20 000 000 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանում որոշման նախագծի 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված 2012 թվականի հուլիսի 10-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման գումարին: Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկում եմ կատարել ուղղումներ:	Դիտողությունը հաշվի է առնվել, փոխակերպ ուղղվել է:



№ 357


22 օգոստոսի, 2012թ.

ՄԵԾԱՐԳՈՒ
ՏԻԱՐ ՄԻՄՈՆ ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ԵՐԼԱՆ

Մեծարգո Պրն. Տեր-Սիմոնյան,
Ի պատասխան Ձեր 25.07.2012թ. թիվ 15/8/10400-12 գրության ներկայացրած
ենթ «Վեհարանի շենքի վերակառուցման» ծրագրի լրամշակված տարբերակը:
Առ Աստված աղոթքով մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, գործոց
հաջողություններ և ամենայն բարիք:



Առդիր՝ 1 թերթ:



11/7

11/8

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ հուլիսի 2012 թվականի N Մ- _____
քաղ. Երևան

«ԵՐԵՎԱՆԻ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 119 ԱՎԱԳ ՂԱՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ,
ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-099-Ա ՈՐՈՇՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՋԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆի-
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրով նախատեսվում է համայնքներում տեղադրել 32205 մետր պոլիէթիլենային խողովակներ, օգտագործվող շինմանյութերի և հողային վերանորոգման աշխատանքների ընդհանուր արժեքը նախատեսվում է 25297900 (քսան հինգ միլիոն երկու հարյուր ինսուն յոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամի չափով: Համայնքներում նախատեսվում է տեղադրել քվով 36 ցայտարարյուրներ: Ծրագրով նախատեսվում է նաև համայնքների բնակիչների համար հիգիենայի գծով խորհրդատվությունների տրամադրում, որի նպատակով Կազմակերպության վարձած մասնագետը առնվազն 2 այցելություն հանդիսավում է կատարելու յուրաքանչյուր համայնք: Միջոցառումները կիրականացվեն 2012 հուլիսից և կավարտվեն ոչ ուշ քան 2012թ. նոյեմբերի 30-ը: Պահանջվող ապրանքների մատակարարումները կսկսվեն 2012թ. հուլիսի 30-ից և կավարտվեն ոչ ուշ քան 2012թ. հոկտեմբերի 25-ը: Միջոցառումները մանրամասն նկարագրված են հավելվածում:	
10. Զեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի համար անհրաժեշտ բոլոր նյութերը ձեռք են բերվելու տեղական շուկայից: Պահանջվող խողովակները և դրանց մոնտաժման համար անհրաժեշտ ապրանքները ձեռք են բերվելու «Վեդի պլաստ» ՍՊԸ-ից՝ ՀՀՀՀ 04109451: Այդ ընկերությանը պետք է վճարվի 60 024 950 (վաթսուն հինգ միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումար: Ծրագրում ընդգրկված համայնքներում տեղադրվելու են 1-3-ական ցայտարարյուրներ, ընդամենը՝ 36 հատ: Դրանք մատակարարվելու են «Մանուշ-Արմեն» ՍՊԸ կողմից՝ ՀՀՀՀ 04220209: Այս աշխատանքների ընդհանուր արժեքը կազմելու է 7576720 (յոթ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ: Ծրագրով ապրանքների ներմուծում չի նախատեսվում:	
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը վարչական ու կազմակերպական ծախսերի համար հարկային արտոնություններ չի նախատեսում ստանալ, քանի որ այդ ծախսերը նվիրատվության գումարներից չեն կատարվելու: ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչության գրասենյակի հետ կապված ծախսերը նույնպես չեն վճարվելու նվիրատվության գումարներից: Ներկայացուցչությունը վճարում է իր աշխատողների բոլոր հարկերը և սոցվճարները: Ծրագրի համար	

11/25

	ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատելու է ջրային ինժեները և հիդրոէներգիայի գծով մասնագետը, որոնց ծառայություններից առաջացող եկամտահարկը և սոցիալական վճարները վճարվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը աշխատելու է անմիջապես յուրաքանչյուր համայնքի, ինչպես նաև համապատասխան մարզպետարանների հետ: Ներկայացուցչությունը համագործակցելու է նաև ՀՀ Կառավարության Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ և ներկայացնելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվետվություններն ու տեղեկատվությունը:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերահսկողությունը իրականացվելու է ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը իր ջրային ինժեների՝ Նշան Հարությունյանի և Ներկայացուցչության լիազորված անձանց՝ Ռոդ և Ջեյն Սթոնների կողմից: Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից նշանակված անձի մասնակցությունը ծրագրի վերահսկողության իրականացման գործընթացում մեծապես կողջունվի:

Ծրագրի լիազորված անձ

Ռոդ Սթոն

Rod Stone

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ - ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

11/25

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

09.08.12p № 3/38-1/1176781/

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 07.08.12թ. N 15/15.4/11099-12 գրության՝ կապված Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20120141 ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում եմք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ա. Զանգուլազյան

Ատոմ Զանգուլազյան

N 034/2076 0-12
09.08.12p



11/25

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

102/4889-12
10.08.12թ.

0078 Երևան, Հայաբյան 41", հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 7-ի
15/15.4/11099-12 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Վերջին օրերի սրբերի» բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20120141 ծրագրի 5-րդ կետում անհրաժեշտ է նշել ծրագրի բնագավառը: Ծրագրի 9-րդ կետով նախատեսվում է համայնքի բնակիչների համար հիգիենայի գծով խորհրդատվությունների տրամադրում, մինչդեռ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վերջինս ծրագրի նպատակում ներառված չէ: Բացի այդ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ծրագիրը նախատեսված է 16 համայնքների համար, մինչդեռ վերը նշված խորհրդատվությունների իրականացումը նախատեսվում է համայնքում իրականացնել: Այդ առումով հստակեցման կարիք ունի, թե որ համայնքի մասին է խոսքը:

Այդ առումով առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227

1035/20810-12
10.08.12թ.



11/25

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության իր., Կառավարական տուն 2

“14” օգոստոսի 2012թ.

N 04/16/4244-12

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Ձեր 09.08.2012թ.

N 15/15.4/11098-12 և N 15/15.4/11099-12 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20120141 և WE20110560 ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքով՝

Ա. ԲԱԽՇՅԱՆ

025/20828-12
14.08.2012թ.

Տեղական ինքնակառավարման
վաչություն հեռ.՝ 511-338



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 060 54 43 02

№ 4/Մ/3-4/8439-12
8.08.12թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.08.2012թ. թիվ 15/15.4/11099-12 գրությանը կից ներկայացված
«Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան
ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքներին մաքուր խմելու ջրի
ջրամատակարարում» WE20120141 ծրագրի մասին» որոշման նախագիծը
բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:



Վ. Միրումյան

Անողակի հարկերի բաժին, հեռ. 060 544652

№ 044/20635-12
08.08.12թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, տեղ /ֆաքս (+374 232) 3 22 51
0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, տեղ /ֆաքս (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

15.08.12 N 01/14.1/2577-12

Ձեր 2012-08-07թ. թիվ 15/15.4/11099-12 գրության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Արագածոտնի մարզում Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան
ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում»
WE20120141 ծրագրի մասին» որոշման նախագիծին, բարեգործական ծրագրերը բարեգործական
որակելուն չենք առարկում և տալիս ենք մեր դրական եզրակացությունը :

Կատարող՝ Ա. Դավթյան
Հեռ.՝ 0232-3-37-74



Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

110/21080-12
15.08.2012թ.

11/25

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ



МАРЗПЕТ
АРАТА

ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փ./60
Հեռ. /0235/ 2-52-16, /010/ 28-60

N 1/3/1-1/3822-12-15 08 2012թ.

Ձեր՝ թիվ 15/15.4/11099-12
07.08.2012թ.

«Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի Վերջին օրերի սրբերի բարեգործական
կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող
«Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20120141 ծրագրի
մասին» որոշման նախագիծը առաջարկվում է ճանաչել բարեգործական:

ՄԱՐԶՊԵՏ՝  Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Կատ.՝ Լ. Խաչատրյան
Հեռ.՝ /0235/ 2-35-70

111/21033-12
15.08.2012թ.



11/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 08 >> 08 2012թ.

N: 01/3833-12

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

«ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 07.08.2012թ.

թիվ՝ 15/15.4/11099-12

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Հ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի
հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքներին
մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20120141 ծրագրի մասին» որոշման
նախագիծը:

Ձենք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝  Ա. ԳԻԶԻՐՅԱՆ

Հ. Արշակյան
/0312/3-16-26

N116/20624-12
08.08.12թ.



11/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77

թիվ 101/104.3.2/4316-12

« 08 » 08 2012 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 07.08.2012թ. թիվ 15/15.4/11099-12 գրությանը

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Կարևորում եմ Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող՝ 278882 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20120141 ծրագիրը և չեմ առարկում այն որակել որպես բարեգործական:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

114/20606-12
8.08.12թ.



11/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ք.Եղեգնաձորի, Շահումյան 5

Հեռ. /374010/ 287401, 2 25 22

<< 20 >> 08 2012թ.

N 01.1/04.4/3907-12 Հեռ. /374010/ 28 18 32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 07.08.2012թ. N 15/15.4/11099-12 գրության՝ տեղեկացնում եմ, որ Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող <<Համայնքներին մաքուր խմելու ջրի մատակարարում>> WE20120141 ծրագրի մասին>> որոշման նախագիծը քննարկվել է մարզպետարանում:

Նախագծի վերաբերյալ առաջարկություններ և առարկություններ չունենք:

Ա. Բալասանյան
Է. ՂԱԶԱՐՅԱՆ

118/21601-12
20.08.2012թ.

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքների մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20120141 ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բավանդականությունը	Հիմնավորում
ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ - ծրագրի 9-րդ կետով նախատեսվում է համայնքի բնակիչների համար հիգիենայի գծով խորհրդատվությունների տրամադրում, մինչդեռ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վերջինս ծրագրի նպատակում ներառված չէ: Բացի այդ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ծրագիրը նախատեսված է 16 համայնքների համար, մինչդեռ վերը նշված խորհրդատվությունների իրականացումը նախատեսվում է համայնքում իրականացնել: Այդ առումով հստակեցման կարիք ունի, թե որ համայնքի մասին է խոսքը: Այդ առումով առաջարկում ենք լրանշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները:	Դիտողությունը հաշվի է առնվել, ծրագիրը լրանշակվել է:

11/25

11/26.1
ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— օգոստոսի 2012 թվականի N Մ — -Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԿԱԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի -ի N 3/3.8-2/-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի -ի N ԴԴ/22/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի -ի N ԱԱ/3-6/-12 եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների (18 տեղ, 5840 կգ ընդհանուր քաշով, 952639.09 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխման ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

11/26.1

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

15.08.2012թ. № 3/3.8-2/10656-12

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.08.2012թ. N 15/15.6/11361-12 գրությամբ ներկայացված Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության
հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին
որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ մեր իրավասությունների շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Զանջուղազյան

034/21153-12
15.08.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

11/26.1

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

14.08.2012թ. № 11/22/8025-12

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.08.2012թ. թիվ 15/15.6/11361-12 գրության կապակցությամբ՝ Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության
նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն»
ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի
վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարություն իր
իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

020/21047-12
14.08.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 11/26.1

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№ 044/21398-12
17.08.2012թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. օգոստոսի 10-ի համար 15/15.6/11361-12 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

044/21398-12
17.08.2012թ.

կապարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 060 54 43 49

11/26.2

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— օգոստոսի 2012 թվականի N Մ — Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՅՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՄԱՅՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի -ի N 3/3.8-2/-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի -ի N ԴԴ/22/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի -ի N ԱԱ/3-6/-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունակախարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի (4 տեղ, 553.4 կգ ընդհանուր քաշով, 179360 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2280.04 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



11/26.2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

0010, Երևան, Մելիք-Արամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.08.2012թ. № 3/3.8-2/10519-12

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.08.2012թ. N 15/15.6/11061-12 գրությամբ ներկայացված Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների
վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման
ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Զանցուղազյան

034/20809-12

10.08.2012թ.

Կատարող՝ Մ. Հարությունյան, հեռ. 595-227



11/26.2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

07.08.2012 N 44/22/7794-12

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.08.2012թ. թիվ 15/15.6/11061-12 գրության կապակցությամբ՝
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման
կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման
նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ առողջապահության նախարարություն
իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Դ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

020/20515-12

07.08.2012թ.

Կատարող՝ Նաիրա Փափախյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի ղեկավարի պաշտոնի պաշտոնական բաժին
հեռախոս 52 27 21



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 11/26.2

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

մ/հ ՁԻԲ/3-Ե/8467-12
09.08.2012թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. օգոստոսի 6-ի համար 15/15.6/11061-12 գրությամբ կարծիքի
ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության
նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն»
ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի
վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. ՄԻՐՈՆՅԱՆ

044/20121-12
09.08.2012թ.

կադրող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 060 54 43 49

11/26.3

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՁԵՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

օգոստոսի 2012 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի -ի N 3/3.8-2/-12, Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի -ի
N ՀՔ/22/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական
եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի -ի N ՎՄ/3-6/-12 եզրակացությունները,
որոշում է:

1. Բարեգործական որակել Միացյալ Հայկական հիմնադրամի կողմից Հայաստանի
Հանրապետությունում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուց-
չության հասցեով ստացված բժշկական պարագաների (103 տեղ, 1727 կգ ընդհանուր
քաշով, 152720 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել
են 6645 ԱՄՆ-ի դոլար, ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն)
ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեոնային Ղարաբաղի
Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-
թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետու-
թյան կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:


Յանկ

11/26.3

2012/22/7555 (18.07.2012 թ.) փոխադրման
ամփոփագրով ներմուծված ապրանքների

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Քանակը	Կշիռը բրուտոյով, կգ	Կշիռը նետոյով, կգ	Արժեքը, ԱՄՆ դոլար
1.	Վիրաբուժական պարագաներ	67 հատ	1518,5	1317,5	143500
2.	Հենակ	17 հատ	34,5	34,5	800
3.	Չեմնափայտ	9 հատ	7,5	7,5	120
4.	Զուգարան շարժական	2 հատ	9,5	8,5	100
5.	Աթոռ լոզանքի հիվանդի համար	1 հատ	2,5	2,5	50
6.	Ստենդ	1 հատ	0,5	0,5	150
7.	Էլեկտրական սալակ	5 հատ	81,5	81,5	5500
8.	Էլեկտրական մահճակալ հիվանդանոցի համար	1 հատ	72,5	72,5	2500
	Ընդամենը	103 հատ	1727	1525	152720

ՀՀ-ում ԼՂՀ Մշտական ներկայացուցչության
վարչատնտեսական բաժնի պետ
Կ. Պողոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

11/26.3

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

308.12 № 3/3.8-2/10223-12

Ձեր № _____

3

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 01.08.2012թ. N 15/15.1/10804-12 գրությամբ ներկայացված Հայաստանի
Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական
ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին որոշման
նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Եսեյան

Ատոմ Զանջուղազյան

034/20327-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

11/26.3

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

1.08.12 N 012/22/7996-12

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 01.08.2012թ թիվ 15/15.1/10804-12 գրության կապակցությամբ՝
«Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի
մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության
նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և
առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Handwritten signature

Դ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

020/20084-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 11/26.3

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

2013-6/8304-12

3.08.12

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. օգոստոսի 1-ի համար 15/15.1/10804-12 գրությամբ կարծիքի
ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի
ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ
չկան:

Handwritten signature

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

044/20319-12

11/26.4

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

օգոստոսի 2012 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 14-ի N 3/3.8-2/10580-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 14-ի N ՎՄ/3-6/8549-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Մեծ Բրիտանիայից «HART» բարեգործական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ուղարկված կավագործության վառարանի (250 կգ ընդհանուր քաշով, 2119.04 ֆունտ ստերլինգ արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 740 եվրո, ՄՃՓ SU) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴՐԵՍ

11/26.4

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

14.08.12թ. N 3/3.8-2/10580-1

Ձեր N

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 08.08.2012թ. N15/15.1/11163-12 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետությունում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա.Ե.Ե.

Ատոմ Զանցուղազյան

14.08.12թ.

Կատարող՝ Մ. Հարությունյան, հեռ. 595-227

N 034/20962-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 11/26.4

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

14. 08. 12թ.

№ ՎՄ/3-6/8549-12

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահի
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. օգոստոսի 8-ի համար 15/15.1/11163-12 գրությամբ կարծիքի
ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի
ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ
չկան:

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

կադրող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 060 54 43 49

14. 08. 12թ.

№ 044/20924-12

11/26.5

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
օգոստոսի 2012 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 24-ի N 3/3.8-2/11014-12 և
Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների
կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 23-ի N ՎՄ/3-6/8948-12 եզրակացությունները,
որոշում է.

1. Բարեգործական որակել անհատ բարերար Սեյրան Կարապետյանի կողմից
Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական
ներկայացուցչության հասցեով ստացված շախմատի ժամացույցների (4 տեղ, 53.5 կգ
ընդհանուր քաշով, 1810 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման
ծախսերը կազմել են 550 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը
ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական
ապահովության նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

11/26.5

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

24.08.12թ. № 3/3.8-2/11014-12

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 22.08.2012թ. N 15/15.1/11828-12 գրությամբ ներկայացված Հայաստանի
Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական
ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N2) ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման
նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Զանցուղազյան

24.08.12թ.

№ 034/22016-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 11/26.5

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

23.08.12թ.

№ 2/ՄԲ/3-6/8948-12

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. օգոստոսի 22-ի համար 15/15.1/11828-12 գրությամբ կարծիքի
ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի
ներմուծման ծրագրի մասին (N2)» որոշման նախագծի վերաբերյալ
առաջարկություններ չկան:

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

23.08.12թ.

№ 044/21962-12

ՆԱԽԱԳԻԾ

11/26.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
օգոստոսի 2012 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 10-ի N 3/3.8-2/10502-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 6-ի N ՎՄ/3-6/8371-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի Լիոնի «Ռոտարի ակումբ» բարեգործական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեոնային Ղարաքաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռների (տպագիր նյութեր, բժշկական պարագաներ ու սարքավորումներ՝ 9 տեղ, 114 կգ ընդհանուր քաշով, 4708.32 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1431 եվրո, «Զվարթնոց» ՍՏ, արհեստական շնչառական սարքեր՝ 1 տեղ, 27 կգ ընդհանուր քաշով, 14729 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 340 եվրո, «Զվարթնոց» ՍՏ, դեֆիբրիլատորներ՝ 1 տեղ, 28 կգ ընդհանուր քաշով, 9811 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 351.53 եվրո, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծման ծրագիրը: Բեռները ստանալուց հետո հանձնվելու են Լեոնային Ղարաքաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաքաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

11/26.6

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.08.12 № 3/38-2/10502-1

Ձեր N:

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 03.08.2012թ. N15/15.1/10979-12 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետությունում Լեոնային Ղարաքաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա.Ե.Ե.

Ատոմ Զանցուղազյան

03.08.2012/20848-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 11/26.6

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ՀՄ/3-6/8371-12
6.08.12

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ա/թ. օգոստոսի 3-ի համար 15/15.1/10979-12 գրությամբ կարծիքի
ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի
ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ
չկան:

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

044/20468-12

ՆԱԽԱԳԻԾ

11/26.7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
օգոստոսի 2012 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 22-ի N 3/3.8-2/10987-12,
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի
օգոստոսի 21-ի N ԴԴ/22/8272-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարության 2012 թվականի օգոստոսի 21-ի N 03/07.2/9155-12 և Հայաստանի
Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012
թվականի օգոստոսի 20-ի N ՎՄ/3-6/8778-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի ԱՄՆ-ի Առողջապահության Ազգային ինստիտուտների
Հոգեկան Առողջության Ազգային ինստիտուտի կողմից աջակցության նպատակով
Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի Մոլեկուլային
կենսաբանության ինստիտուտի հասցեով ստացված բեռի (գիտահետազոտական
նպատակների համար նախատեսված մարդու ԴՆԹ-ի նմուշներ՝ 1 տեղ, 20 կգ ընդհանուր
քաշով, 100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը
կազմել են 234 ԱՄՆ-ի դոլար, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի
Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտին՝ նշված բեռի համապատասխան
ձևակերպումները ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,
Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի
Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

11/26.7

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

22.08.12թ. № 3/3.8-2/10987-12

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 17.08.2012թ. N 15/15.11/11599-12 գրությամբ ներկայացված Հայաստանի
Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի Մոլեկուլային կենսաբանության
ինստիտուտի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասի ՀՀ կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի
վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ
և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Զանջուրազյան

Կատարող՝ Մ. Հարությունյան, հեռ. 595-227

22.08.12թ.

№ 034/21873-12



11/26.7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

21.08.12թ. N 177/22/8272-12

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 17.08.2012թ. թիվ 15/15.11/11599-12 գրության կապակցությամբ՝
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության Գիտությունների
Ազգային ակադեմիայի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հասցեով
ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ
հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժին
հեռախոս 52 27 21

21.08.12թ.

№ 020/21727-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՏԵՂԱԿԱԼ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

11/26.7

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/04.2/9155-12 "21 օգոստոս" 2012թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր՝ 17.08.2012թ., N 15/15.11/11599-12 գրության՝ հայտնում եմ, որ
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի՝ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային
ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հասցեով ստացված բեռի
ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության գիտության և
նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Մ.ՄԿՐՏՅԱՆ

Կապ.՝ Ն.Մնացականյան
հեռ.՝ 524777

21.08.12թ.

N 031/21762-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 11/26.7

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

20.08.12թ.

N 044/3-6/8778-12

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. օգոստոսի 17-ի համար 15/15.11/11599-12 գրությամբ կարծիքի
ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային
ակադեմիայի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հասցեով ստացված բեռի
ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ
չկան:

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

կապարդող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 060 54 43 49

20.08.12թ.

N 044/21515-12

11/26.8

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
օգոստոսի 2012 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան

**«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 14-ի N 3/3.8-2/10586-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 10-ի N ԴԴ/22/7905-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 15-ի N ՎՄ/3-6/8588-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով աջակցության նպատակով «Միաքայեյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (41 տեղ, 4605 կգ ընդհանուր քաշով, 507757 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7020 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:


2. «Միաքայեյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումները ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ց ՈՒ Ց Ա Վ

11/26.8

Դ/հ	Ապրանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Քաշը /կգ/	Գինը /\$/
1	2	3	4	5	6
1.	բժշկական գործիքներ	h	200	125	1200
2.	մեզատասկոպ	h	3	50	250
3.	բժշկ. մանկական մահճակալ	h	26	975	2057
4.	քայլակ	h	2	7	110
5.	անվասայակ	h	4	100	285
6.	օրթոպեդիական կոշիկներ	h	20	5	20
7.	վիրաբուժական հագուստ	h	120	40	300
8.	բարձ	h	80	200	100
9.	մոնիտոր	h	3	45	840
10.	վիրաբուժական լույս	h	1	50	100
11.	ախտահանիչ սարք	h	1	50	150
12.	ներքնակ	h	18	150	330
13.	աթոռ անցքով	h	4	40	160
14.	բազկաթոռ	h	6	300	600
15.	գործիքների սեղան	h	2	30	80
16.	էլ. մահճակալ բժշկական	h	1	100	200
17.	պտուտակասեղան	h	1	8	350
18.	դիմա-ծնոտային ռենտգեն սարք	h	1	500	100000
19.	ընդհանուր հետազոտման սեղան	h	1	80	200
20.	ռենտգեն սարք	h	1	1500	400000
21.	էլ. սնուցման սարք	h	2	240	400
22.	հենակ	h	24	10	25
	Ընդամենը՝			4605	507757



Տնօրեն

Ա.Բ.ԹԱՄԱԶՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

11/26.8

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

14. 08. 12թ. № 3/3.8-2/10586-12

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 09.08.2012թ. N15/15.11/11228-12 գրությամբ ներկայացված «Միքայելյան
վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերություն հասցեով ստացված
բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր
իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Զանցուղազյան

14. 08. 12թ.

№ 034/20966-12



11/26.8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

10. 08. 12թ. N 10/22/7905-12

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 09.08.2012թ. թիվ 15/15.11/11228-12 գրության կապակցությամբ՝
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ
բաժնետիրական ընկերություն հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի
մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության
նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և
առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Դ.ԴՈՒՄԱՆՅԱՆ

10. 08. 12թ.

№ 020/20816-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆՔԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 11/26.8

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

15. 08. 12 թ

№ 2/ՎՄ/3-6/8588-12

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. օգոստոսի 10-ի համար 15/15.11/11228-12 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Միջայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերություն հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. ՄԻՐՈՆՅԱՆ

կադրող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 060 54 43 49

15. 08. 12 թ.

№ 044/21058-12

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
օգոստոսի 2012 թվականի N Մ-
քաղ. Երևան

-Ա

11/26.9

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 14-ի N 3/3.8-2/10597-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 14-ի N ԴԴ/22/8012-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 16-ի N ՎՄ/3-6/8690-12 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի օգոստոսի 10-ի N 101/104.3.1/4343-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է**.

1. Բարեգործական որակել Բավարիայի երկրամասի Կարմիր Խաչի կողմից Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի (1431 տեղ, 17660 կգ ընդհանուր քաշով, 50000 եվրո ընդհանուր արժեքով, բեռնափոխադրման և այլ ծախսերը կազմում են 679240 դրամ, «Գուգարք» տարածաշրջանային մաքսատուն, բեռի բաշխման ցանկը կցվում է) ներմուծման ծրագիրը:

2. Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

Հաստատում են՝ Ստեփանավանի «Վերածնունդ» Բ/Հ

Հոգաբարձուների խորհրդի նախագահ

Ռ. Քոչարյան

[Signature]

11/26.3

Յ ՈՒ Յ Ա Կ

Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ներմուծված ապրանքների բախշման

Անվանումը	Չափի միավոր	Քանակը	Բրուտ տո քաշ	Արժեքը եվրո	Ստացող Կազմակերպությունների անվանումը
լվացող հեղուկ միջոց PERSIL	արկղ	10	2,248	3,500	Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններ թիվ 1 մանկ. - 3 հատ թիվ 2 մանկ. - 2 հատ թիվ 3 մանկ. - 2 հատ թիվ 4 մանկ. - 3 հատ
փափուկ կահույք կաշվեպատ	կոմպլեկտ կտոր	1 4	190	1000	Ստեփանավանի «Վերածնունդ» Բ/Հ
Ճաշասեղան մետաղ. իրանով պլ. երեսամատով+ Տիստ արձու մետաղ. իրանով՝ ցանց ապատ	կոմպլեկտ կտոր	1 7	60	400	Ստեփանավանի «Վերածնունդ» Բ/Հ
Պարտեզային հովանոց	հատ	1	27	100	«Վերածնունդ» Բ/Հ
Մեկ տեղանոց զսպանակավոր ներքնակ օգտագործած	հատ	14	154	400	Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններ թիվ 1 մանկ. - 4 հատ թիվ 2 մանկ. - 3 հատ թիվ 3 մանկ. - 3 հատ թիվ 4 մանկ. - 4 հատ

Թեյի կերամիկական բաժակներ	տուփ	40	440	2000	Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին, ըստ սոցիալական ծառայության տրված ցուցակի
